ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

26 դեկտեմբերի 2019թ.
Ժամը 10:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Վիլեն Գիշյան
Քարտուղար՝ Հեղինե Թադևոսյան
Գնահատող անդամներ՝ Կարապետ Քարտաշյան, Հայկ Հովհաննիսյան
Բացող անդամներ՝ Լյուբով Մարկոսյան, Լարիսա Առաքելյան

1. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման, գնահատման և Մասնակիցների ծանուցման մասին.**

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 18.12.2019թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2019 թվականի դեկտեմբերի 25-ին, Ժամը՝ 10:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

1.3 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/8»** ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

1.4 Հիմք ընդունելով Հրավերի 8.9 կետը, քանի որ հայտերի գնահատման արդյունքում Մասնակից՝ **«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի,** հայտում արձանագրվել են անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ, ուստի հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և հանձնաժողովի քարտուղարը ծանուցում է ուղղարկել և դրա մասին տեղեկացրել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ շտկել անհամապատասխանությունը:

1.5 Հրավերով սահմանված ժամկետում՝ **«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն** գնահատող հանձնաժողովին ներկայացրել է հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

1.6 **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/8»** ծածկագրով ընթացակարգի Մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ **«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտի շտկված տարբերակը գնահատել բավարար:

1.7 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետով, **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/8»** ծածկագրով ընթացակարգի նիստը կասեցվել է և N 1,2,3,4,5,6 չափաբաժնների մասով գների նվազեցման շուրջ բավարար գնահատված մասնակիցներ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին, «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, « Մելիքսեթ Ավետիսյան Ղազարի» ԱՁ -ին հրավիրել բանակցության:

Ծանուցում ուղարկել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին, «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, « Մելիքսեթ Ավետիսյան Ղազարի» ԱՁ-ին միաժամանակյա բանակցություններին մասնակցելու վերաբերյալ:

Միաժամանակյա բանակցությունների վարման նիստը կկայանա 2019 թվականի դեկտեմբերի 30-ին, Ժամը՝10:00-ին ք. Երևան, Արշակունյաց 63 հասցեում:

1.7 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել միաժամանակյա բանակցությունների ավարտից հետո նույն օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Վ. Գիշյան

Քարտուղար՝ ---------- Հ. Թադևոսյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Կ. Քարտաշյան

2. ---------- Հ. Հովհաննիսյան

Բացող անդամներ՝

1. ---------- Լ. Մարկոսյան

2. ---------- Լ. Առաքելյան